

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Պարոն Վարչապետ,

Ձեզ չի^օ թվում արդյոք, որ Կառավարության նոր «հեղափոխական» որոշումը՝ դեղատոմսերի գրման և դեղեր բաց թողնելու (շուրջ 70 տոկոս) կարգ սահմանելու վերաբերյալ հանդիսանում է (կենսաթոշակատուների և բնակչության սոցիալապես անապահով շերտերի համար) չափազանց չկշռադատված, ոչ պրոֆեսիոնալ և անմարդկային եզրակացության հետևանք:

Այն «պրոֆեսիոնալները», որոնք մշակել և հաստատել են սույն կառավարական որոշումը, փաստացի ցույց են տվել իրենց անիրազեկությունն ու անտեղյակությունը երկրի քաղաքացիների առօրյա կյանքի մասին: Նրանք չգիտեն այն ստվերային մեխանիզմների և տեխնոլոգիաների մասին, որոնք «ծաղկում են ապրում» մեր առողջապահական համակարգում:

Դե յուրե, ինչպես ցանկացած ժողովրդավարական երկրում, մեր երկրի քաղաքացիները ևս ունեն որակյալ բժշկական և դեղորայքային ապահովության իրավունք, սակայն դե ֆակտո այս իրավունքը վերածվել է պացիենտների ֆինանսական «քերթման»՝ բժշկական անձնակազմի ճնշող մեծամասնության զանգվածային անիրազեկության և խոր անտարբերության պայմաններում:

Դուք կամ Ձեր առողջապահության նախարարը երբևէ եղե՞լ էք մայրաքաղաքի պոլիկլինիկաներում որպես շարքային այցելու (էլ չեմ ասում մարզային և գյուղական բժշկական հիմարկներում), կանգնե՞լ էք հերթերում, վճարե՞լ էք յուրաքանչյուր բժշկական ծառայության կամ տեղեկանքի համար, սովորական քաղաքացու նման օգտվե՞լ էք պետպատվերի ծառայություններից: Գիտե՞ք արդյոք, թե ինչպիսի ժամանակավոր նորմատիվներ և գներ են գործում մեր առողջապահության համակարգում: Գիտե՞ք արդյոք առանձին բուժող բժիշկների և դեղատոմսերի ու ախտորոշման կոմերցիոն կենտրոնների միջև «ստվերային» կապերի մասին, որտեղ «Ձեր բարօրության համար» հետազոտման կուղարկի բուժող բժիշկը՝ հիմնավորելով, որ պոլիկլինիկայում բացակայում են ախտորոշման սարքավորումները:

Մի կողմից, ՀՀ կառավարության այս որոշման իրականացմամբ կավելանա սոցիալապես անապահով բնակչության բռնագանձումների քանակն ու որակը, իսկ մյուս կողմից այն նոր ուղիներ կբացի դեղորայքային միջոցների կեղծման և մաքսանենգության համար՝ ի շահ մաքսային ծառայողների «ստվերային» եկամուտների:

Կարելի է ենթադրել, որ մեր բարձրագույն իշխանությունն ապրում է «քվանտային մեխանիկայի օրենքներով», ուր գոյություն ունի իրական տիեզերք, որտեղ ապրում է

երկրի բնակչության հիմնական մասը, և բազմաթիվ տիեզերքներ՝ ստեղծված յուրաքանչյուր բարձրաստիճան չինովնիկի կողմից՝ իր իսկ բարօրության համար:

Վերջում, կցանկանայի մի օրինակ բերել. Հայաստանում երկրաշարժի հետևանքների վերացման տարիներին ԽՍՀՄ կառավարության որոշմամբ ստեղծվել էր օպերատիվ շտաբ (ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովի գլխավորությամբ), որը պետք է համակարգեր միութենական և հանրապետական ենթակայության բոլոր նախարարությունների և գերատեսչությունների աշխատանքը: Եվ ահա, վերոնշյալ շտաբի նիստերից մեկի ժամանակ գործերի իրավիճակի մասին զեկուցում էր Հայկական ԽՍՀ կապի նորանշանակ նախարարը (որը եղել էր ՀԽՍՀ կապի փոխնախարարը շինարարության գծով: Լինելով բարձր պրոֆեսիոնալ շինարարության ասպարեզում, նա դիլետանտ էր կապի կազմակերպման գործում): Նրա զեկույցից հետո Ն. Ռիժկովը մեկ հարց տվեց. «Ո՞ր... քեզ նախարար նշանակել»:

Այս հարցը հրատապ է նաև մեր դժվարին ժամանակներում՝ «Ո՞վ և ինչո՞ւ է նշանակել առողջապահության գործող նախարարին»: Միգուցե նա մինչ այս նշանակումը պրոֆեսիոնալ էր իր գործում:

Մի՞ թե մեր երկրում չի գալու մի այնպիսի ժամանակ, երբ պաշտոնների կնշանակեն հիմք ընդունելով թեկնածուների պրոֆեսիոնալիզմը, և ոչ թե գնահատման այլ չափանիշներ...

Լևոն Ներսիսյան

Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության
հայկական կենտրոնի տնօրեն